Հավելված N 2
ՀՀ կառավարության 2024 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1482-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են մասնագիտական որակավորման վկայական տալու, այդ թվում՝ կորած կամ վնասված մասնագիտական որակավորման վկայականի կրկնօրինակ տալու գործընթացները:

2. Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումներ կատարող կազմակերպություններում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը վերջին տասը տարվա անընդմեջ ղեկավար պաշտոններում կառավարման ստաժ ունեցող անձանց առաջին անգամ մասնագիտական որակավորման վկայականը տրվում է առանց որակավորման քննություն հանձնելու՝ «Պետական տուրքի մասին» օրենքով փոխադրումների մենեջերի մասնագիտական որակավորման վկայական տալու համար սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը և իր աշխատանքային գործունեության վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը ներկայացնելու դեպքում:

3. Որակավորման քննության դրական արդյունքի կամ սույն կարգի 2-րդ կետում նախատեսված փաստաթղթերը լիազոր մարմին ներկայացնելու դեպքում մասնագիտական որակավորման վկայականը տրվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Սույն կարգի 3-րդ կետում նախատեսված դեպքում փոխադրումների մենեջերը մասնագիտական որակավորման վկայական ստանալու համար լիազոր մարմին ներկայացնում է «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված փոխադրումների մենեջերի մասնագիտական որակավորման վկայական տալու համար սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը:

5. Մասնագիտական որակավորման վկայականը տրվում է հինգ տարի ժամկետով:

6. Կորած կամ վնասված մասնագիտական որակավորման վկայականի կրկնօրինակը ստանալու համար անձը լիազոր մարմին է ներկայացնում դիմում, անձը հաստատող փաստաթղթի պատճենը և «Պետական տուրքի մասին» օրենքով փոխադրումների մենեջերի մասնագիտական որակավորման վկայական տալու համար սահմանված պետական տուրքի վճարման անդորրագիրը: Կորած կամ վնասված մասնագիտական որակավորման վկայականի կրկնօրինակը տրվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

7. Մասնագիտական որակավորման վկայականի ժամկետը լրանալուց ոչ շուտ, քան երեք ամիս առաջ և ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ փոխադրումների մենեջերը կարող է դիմել լիազոր մարմնին՝ սույն հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան մասնագիտական որակավորման նոր վկայական ստանալու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ